## Հ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

(Ծննդյան 60-ամյակի առթիվ)

Լրացավ պատմաբան, Հայաստանի ԳԱ թղթակից անդամ, պատմության ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր Հրանտ Ալեքսանի Ավետիսյանի ծննդյան 60 և աշխատանքային, հասարակական-քաղաքական, գիտական գործունեության 40 տարին։

Հ. Ա. Ավետիսյանը ծնվել է 1927 թ. մարտի 10-ին Կիրովական քաղաքում։ 1941 թ. միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում։ 1949 թ. անցել է կոմերիտական, իսկ 1952 թ.՝ կուսակցական աշխատանքի։ Շուրջ 25 տարի (1954—1979 թթ.) պաշտոնավարել է ՀՍՍՀ ԳԱ նախագահության ապարատում, վարելով ակադեմիայի նախագահության գիտական քարտուղարի, գլխավոր գիտական քարտուղարի տեղակալի և գիտական կադրերի պատրաստման խորհրդի նախագահի պարտականությունները։ 1979 թ. փետրվարից Հ. Ա. Ավետիսյանը գլխավորում է հանրապետության ԳԱ պատմության ինստիտուտը։



Արդյունավետ է Հ. Ա. Ավետիսյանի ծառայությունը լենինյան կոմերիտմիության, երիտասարդական հեղափոխական շարժումների պատմության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի և սոցիալիստական շինարարության առանցքային պրոբլեմների ուսումնասիրման ասպարեզում։ Նա 1960 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1966 թ.՝ դոկտորական դիսերտացիա, տպագրել է (հայերեն և ռուսերեն լեզուներով) 50-ից ավելի աշխատություններ, այդ թվում 10 մենագրություն, որոնք բարձր են գնահատվել մասնագետների շրջանում։ Կոմերիտմիության և երիտասարդության պատմությանը նվիրված աշխատությունների համար Հ. Ա. Ավետիսյանը արժանացել է Հայաստանի (1971 թ.), միութենական (1978 թ.) Լենինյան կոմերիտմիության մրցանակներին։

Հ. Ա. Ավետիսյանի որոշ աշխատություններ նվիրված են Հայաստանում և Անդրկովկասում հեղափոխական շարժումների, սովետական կարգերի հաստատման և սոցիալիստական շինարարության պատմությանը, այդ խնդիրների լուծման մեջ կոմերիտմիության և երիտասարդության ունեցած մասնակցությանը։ Իր մենագրություններում հեղինակը հարուստ փաստերով, Անդրկովկասի երկրամասի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական իրադարձությունների լայն ֆոնի վրա ցույց է տալիս կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ կոմերիտմիության և ամբողջ երիտասարդության ունեցած հիրավի մեծ ու ակտիվ ներդրումը սովետական իշխանության հաղթանակի, նրա ամրապնդման համար մղված պայքարում, պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքների իրագործման ասպարեզում։

Զգալի է Հ. Ա. Ավետիսյանի գիտական ավանդը երիտասարդության միջազգային հեղափոխական շարժման պատմության հետազոտման մեջ։ Այդ պրոբլեմին են նվիրված նրա «Վ. Ի. Լենինը և պրոլետարական ինտերնացիոնալիզմը երիտասարդական հեղափոխական շարժման մեջ (1894—1920 թթ.)» և «Պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի ներքո» մենագրությունները։ Սրանք ֆունդամենտալ գործեր են, որոնք աչքի են ընկնում հարցադրումների

նորությամբ, նյութի հարուստությամբ: Նրանցում վառ ու համոզիչ կերպով ցույց է տրված Վ. Ի. Լենինի հիրավի տիտանական, բազմակողմանի տեսական ու պրակտիկ գործունեությունը երիտասարդությանը մարքսիզմի ու պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու, նրան հեղափոխական շարժման մեջ ընդգրկելու, նոր կյանքի կերտմանը նվիրվելու ուղղությամբ:

Վերլուծելով կոմունիստական երիտասարդական ինտերնացիոնալի (ԿԵՄ) գործունեությունը, Հ. Ավետիսյանը այն դիտում է, որպես նոր ուղենիշ ամբողջ աշխարհի պրոլետարական երիտասարդության կյանքում, որպես իսկական հեղափոխական կազմակերպությունների ստեղծման լենինյան սկզբունքների հաղթանակ: Առանձնակի շեշտվում է սովետական կոմերիտմիության դերը աշխարհի երիտասարդությանը պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու առումով: Այդ իմաստով արժեքավոր են Հ. Ա. Ավետիսյանի նաև այն աշխատությունները, որոնք նվիրված են երիտասարդական միջազգային հեղափոխական շարժման ականավոր գործիչ Ռաֆֆի Խիտարովի կյանքին ու գործունեությանը և «Մայիսյան ապստամբությունը Կոմինտերնի փաստաթղթերում» գիրքը: Վերջինում Հայաստանի աշխատավորների հերոսական պայքարը դիտարկվում է նոր կողմից՝ ինչպիսի՞ արձագանք է գտել և ինչպիսի համերաշխության է արժանացել Մայիսյան ապստամբությունը աշխարհի կոմունիստների շրջանում: Ուշագրավ է նաև «Մեծ Հոկտեմբերը և հեղափոխական Հունգարիան» տպագրության ընթացքում գտնվող հետազոտությունը, որում պատշաճ խորությամբ ու համոզիչ փաստերով քննարկվում են Վ. Ի. Լենինի գաղափարների, Մեծ Հոկտեմբերի ու սովետական իշխանության հսկայական, որոշիչ դերն ու նշանակությունը միջազգային պրոլետարիատի հեղափոխական շարժման ծավալման ասպարեզում, հատկապես Հունգարիայի աշխատավորների հերոսական հեղափոխական պայքարի զարգացման, 1919 թ. այնտեղ սովետական իշխանության հաստատման գործում:

Հ. Ավետիսյանը օժտված է գիտության կազմակերպչի ունակություններով: Այժմ ինստիտուտը իրականացնում է հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի նոր հրատարակությունը (ռուսերեն լեզվով) և այլ խնդիրների լուծումը, որոնք բխում են ՍՄԿԿ XXVII համագումարի որոշումներից: Ավետիսյանը հանդիսանում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական խորհուրդների նախագահը, Երևանի պետական համալսարանի, Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի և այլ գիտական խորհուրդների անդամ է, կատարում է բազմաթիվ այլ պարտականություններ: Նա մասնակցել է միութենական և միջազգային բազմաթիվ գիտական կոնֆերանսների, նստաշրջանների ու սիմպոզիումների, հանդես եկել զեկուցումներով (Վարշավա, Բուդապեշտ, Բուխարեստ, Վաշինգտոն), պատվով ու ըստ արժանվույն ներկայացնելով այնտեղ սովետական պատմագիտությունը:

1950 թ. ՍՄԿԿ անդամ Հ. Ա. Ավետիսյանը կատարում է նաև հասարակական ակտիվ աշխատանք: Երկար տարիներ նա եղել է ՀՍՍՀ ԳԱ նախագահության կուսկազմակերպության քարտուղար, բազմիցս ընտրվել է Հայաստանի կոմունիստական կուսակցության Երևանի քաղաքային, Կիրովյան (ներկայումս Սպանդարյան) և 26 կոմիսարների շրջկոմների, դրանց բյուրոների անդամ, ժողովրդական դեպուտատների Երևանի քաղաքային սովետի դեպուտատ և նրա գործկոմի անդամ: ՀՍՍՀ «Գիտելիք» ընկերության նախագահության անդամ և գիտությունների ակադեմիայի «Գիտելիք» ընկերության վարչության նախագահ Հ. Ավետիսյանը ակտիվ մասնակցություն է բերում աշխատավորների կոմունիստական դաստիարակության գործին:

Հ. Ա. Ավետիսյանի բազմակողմանի ու արդյունավետ աշխատանքը բարձր է գնահատվել հանրապետության կուսակցական, սովետական և հասարակական կազմակերպությունների կողմից: Նա պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով, մեդալներով ու պատվոգրերով:

Իր գիտական վաստակով, կազմակերպչական ունակություններով, կուսակցական սկզբունքայնությամբ, հոգատարությամբ ու բարյացակամությամբ Հ. Ա. Ավետիսյանը արժանի հարգանք ու հեղինակություն է վայելում գործընկերների, պատմության ինստիտուտի կոլեկտիվի և ՀՍՍՀ ԳԱ աշխատողների շրջանում: Նա լայն ճանաչում ունի ինչպես մեր հանրապետությունում, այնպես էլ սովետական պատմաբանների շրջանում:

Հոբելյարը իր կյանքի 60-րդ տարին բոլորում է ստեղծագործական ծաղկման շրջանում: Ցանկանում ենք նրան քաջառողջություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Պատմ. գիտ. դոկտորներ Վ. Ն. ՂԱԶԱԽԵՑՅԱՆ
Ն. Ա. ԹԱՎԱՔԱԼՅԱՆ